այդ բոլորը վերագրում են Ցազկերային, թէ նա հայերին բոլորովին պարսկացնելու համար, ձգտում էր նրանց մոխրապաշտ դարձնել։ Արեւմտեան-Բիւզանդական Հայաստանի ժողովուրդը, կեղեքուած երկրագործը 535 թուին դիմում է Տիզբոն, խնդրում է իրան ազատել կայսերական սոսկալի հարկերից եւ կեղեքումներից եւ օգնութիւն է պահանջում. իսկ հայ հողագործի բողոքների մասին ո՛չ մի բառով անգամ չեն յիշատակում, լռում են։ Անշուշտ Մամիկոնեան, Բագրատունի եւ Արծրունի իշխանների ապսպրած եւ գրել տուած պատմութիւնները պիտի ներբողէին միայն նախարարական տոհմերը եւ քրիստոնէութիւնը, որի բեմերից վարդապետները քարոզում էին — «ծառայք հնազանդ լերուք տերանց ձերոց»։

Նկատելի է, որ Պարթեւները Բակտրիայից Հայաստանի թագաւոր դառնալուց յետոյ, հելլէնական դից արձաններ են բերում եւ մտցնում բնիկ դից տաճարները եւ հրամայում են երկրպագել։ Մեզ յայտնի չէ, թէ արդեօք երկրագործ եւ արհեստաւոր ժողովուրդը համամի՞տ էր Պարթեւ գահակալներին եւ նրանց քրմերին, երկրպագո՞ւմ, զոհաբերո՞ւմ էր թէ ո՛չ։ Այս մասին լռում են պատմիչները, բայց շատ հաւանական է, որ արեւա-մոխրապաշտ ժողովուրդը, հետեւելով Պարսկաստանի երկրագործին, արհամարէր հելլէնական արձանները, քանի որ